

ՀԱՅՈՒ ԱՅՎԱՍԱԼ

Հ Ե Խ Գ Լ Ս

ԵՐՈՅԵԿԵՆ, ԲԵՐԿԵՆ, ԵՍԱՄՄԻՐԵԿԵՆ ԵՒ ԱԹԵՒՏՐԵԿԵՆ

ԳԻՅԵԼԵԱՑ

ՇՐՋԱՆ ՁԵ ՑԱՄՍ ԵԱՅ

Շ Ե Ր Ը Դ Ի Ք

Գ. Պ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ Տ. ԳԱՐԳԱՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ. Ա. ՇՐՋԱՆ

1862 թ. մայ. 1 ամ. թիւ 3. ՄԱՐ. 5

Հաստիարակի տմբաց երկու տնօքան:

Գեցանեաց գիրն է 8 դրանգ.

Խօճիրեն գուրս ձամբու ծալեց ոտնոցին ջրոց է:

Սուրպաքն. թիւնեաց շրջանին սկիցը կասկին:

Դաստիարակի համ մանկավարժի ընտրութեան ջրայ:

Դաստիարակի կամ մանկավարժի մը յատկութիւն-

ները պէտք է որ ըլլան բարեկրթութիւն, խոչե-

մութիւն և հմտութիւն: Ընկիրթ և անհմուտ դաս-

տիարակը չկարենալով իւր աշակերտները դաստիա-

րակել ինչպէս որ պէտք է, զանոնք իրեն պէտ ան-

կիրթ ու անհմուտ ընելէ վերջը՝ անոնց՝ ծուռ և

շփոթ դաղափարներ ունենալուն պատճառ կ'ըլլայ:

Դ՞նչ աեսակ դաստիարակութիւն կամ կրթու-

թիւն կը յուսացնի այն տղեն՝ որուն ծնողքը կամ

դաստիարակը անհոգ ու թեամբ ետեկ չըլլան՝ անոր

բարի խրատներ տալու, զանի զէշ ձամբայներէ

հեռացընելու, անոր յոռի կրթերը սանձահարելու,

և անոր փափուկ սրտին մէջ քրիստոնէութեան կեն-

սաւէտ միզուանքներով՝ առաքինութեան սերմունքը

չանկեն, զայն ՚ի մանկութենէ ժումիալութեան և

շանկեն, զայն ՚ի մանկութենէ ժումիալութեան և

Հ անդեւիս վերաբերեաց որ եւ իցէ նամակ եւ գրադիմ տարունին դիմար ուցցուի:

Մասրագ. թու. թեան նեցերն են:

Խօճիր՝ Գայուս բական Խանդականց, թիւ. 2 եւ ծացինի գրասենեակը, կիրիլի խան, թիւ. 3:

զ զատութեան չվարժեցնեն, վերջասկէս առանց ա-
նոր՝ հիմնական և ծշմարիտ դաստիարակութեան և
բարյականութեան բարի բարի սկզբունքները սով-
րեցընելու՝ երեսի վրայ թողուն զայն. ո՞չ ապաքէն
նոյնին մոլի, վատասիրտ, անհամբեր, շոայլ, ան-
զդաստ, կամապաշտ, միով բանիւանկիրթ ու տը-
մարդի ըլլալուն իրենք կ'ըլլան սկզբնապատճառ:Վ արժարանի մը մէջ՝ ուրանու հարիւրաւոր
տղայք միասիրտ, միահոգի, միաբան, զիրար սիրե-
լով, յարգելով, մէկզմէկու օդնելով աշխատիլ
պէտք են, այն ժամանակ միայն կարող են բարոյա-
կան, մասնուրական և բնական կրթութեանց ան-
խարդախ կաթը շամբել երբար աղնուաբանոյ և
ուսումնական դասատուի կամ դաստիարակի մը տը-
ւած օգտակար խրամներով, և անոր՝ ուսմանց
և զիտութեանց վրայ ունեցած լուսաւոր և ուղեղ
ծանօթութիւններով սնանին ու խնամուին:

Վայ այն տղայոց՝ որոնք, բարոյականը աւ-
րուած, զիտութիւններէ զուրկ, ուսմանց վրայ քաշ-
նի մը ծուռ ու մուռ տեղեկութիւններ ունեցող և
իւր անձնական շահը ամեն բանէ նախագաս համա-
րող դասատու կամ վարդիչ մը ունին. վերջապէս այն-
ովիսի մէկը՝ որ գաստիքարակութիւնը ըսել է չգիտեր,
իւր բոլոր բարոյականն է խորամանկութիւն՝ ստակ
շահէլու համար, խստութիւն և բռնութիւն՝ աղջո-
քը զսպելու համար, և աւելի ցած ախտերու աէր,
միով բանիւ հանած վարածին մէկը, որն որ, ինչ-
պէս ըսած է երբեմն արդոյ բանասէր մը, ամեն
վիճակէ և պաշտօնէ անարդ ուելէն յետոյ, եկեր
մարդիկ կրթելու վիճակին մէջ ինիկեր է՝ իբրև վեր-
ջին՝ ասլաստան։ Վայ չէ՞ մի, կըսեմ, այն աղա-
յոց՝ որ այսպիսի մարդու մը ձեռաց տակ ըլլան . . .

Ղեղի կ'ուղղեմ խօսքու, ձնդղք և առաւել ես
մայրե՛ր, դո՞ւք գուք պարտաւոր էք նախ ձեր զա-
ւակաց դաստիարակները լաւ մի ճանչել և յետ այ-
նորդիկ անոնց ձեռքը յանձնել ձեր մատղաշ և ան-
մեղ զաւակաց փափուկ հասակը և հողին, եթէ զա-
նոնք ճշմարտապէս կը սիրէք, և եթէ անոնց կեան-
քը երջանիկ կ'ուղէք որ ըլլայ: Զեր ամենամեծ հո-
ղը պիտի ըլլայ Դաստիարակի ընդուն-Ավանը:

Պարկեցաւ, չմուտ և կրթեալ մէ կը ընարեցէք
ձեր մանչերուն և աղջկանց դաստիարակներն ու դա-
սատուները, որ մի՛ զուցէ ետքը ձեր անխոյնեմու-
թեան վրայ ափստուաք :

Եթէ գժքաղդաբար ձեր սիրելեաց գաստիա-
րակները անհամեստ և մոլի անձեր են, իսկոյն ա-
ռանց բովլէ մը սպասելու քաշեցէք հանեցէք այնպի-
սեաց քովլէն զանոնք և խաղաղ հեռացուցէք անոնց-
մէ. ապա թէ ոչ խեղճերուն բարեն ու բնաւորու-
թիւնը բոլը զի՞ւ կ'աւը ուի., իրենց գաստիարակին
աւրուած բնաւորութիւնը դիմացնին օրինակ ունե-
նալով:

Դամբաղդաբար մեր Ազգին վարժարաններուն
մշջի դաստիարակներն ու դասատուները առանց
քննութեան ընարուած են

Աշուշտ Ազգային Սահմանադրական բարեկարգ վարչութեան պարագը պիտի ըլլայ իրքեւ ըլլայ իր ամեն կողմերու զաւակունքը, և անոնց դաստիարակներն ու դաստիառները ամենայն կերպիւ քննել և այնպէս ընտրել։ (1)

Այսպեսով միայն կարելի է Ազգային վարժաւ

բաններէն հեռայըլներւ բոլորովլին անբարդյական
կէս-զիտուն և մօլի գասառուները , և փ կիւլ ա
պալայ սերունդը բարոյական և մնաւորական ժան
տախաէ մը :

Պիտի ժամանէ արդեօք այն յահկալի ժամանակը՝ յորում բռլը Հայ վարժարանները Ճշմարտապէս լուսաւորեալ և խոհեմ անձանց Ուսումնական խորհուրդներու հոգածարութեամբ նայութեալ ու խնամուին և առեն չահնք 'ի զործ գրուին դէպ յառաջադիմութիւն :

Պիտի տեսնե՞նք այս օրը ո՛չ
օրչնեալ օր Այն ժամանակ տհա կա
բող պիտի ըլլանք տեսնել բարեկարդ և ուսմամբ
ծաղկած վարժարաններ , իրենց պաշտօնին արժա
նաւոր գասառուներ , բարեկիրթ գաստիարակներ
չմուտ ու կրթեալ աշակերտներ . այն ժամանակ մի
այն կարող է Ազգը օդուտ քաղել և ոչ մինչ
ցայցմ եղած աղօրինաւոր տեսչութեանց ներ
քե

Վարժարան մը բարեկարգ չըսուիր , երբ պքանի մը լեզուաց և սկզբնական ուսմանց լիկ դաստութիւն ըլլայ իւր մէջը , առանց կարգի կանոնի , առանց հիմնական կամ ձշմարիտ դաստիարակութիւն սովորեցընելու և առանց դասաւուներ լաւ մի քննելու . դպրոց մը յառաջ կացած չըսուիր պարագ տեղը ստակ մսխելով , շատ աղջային եւ տարագի դասաւու կամ վարժապետ անուամբ ան կարող մարդիկ կերակրելով . հայտ միայն շատ արդ իւնք և օգուտ ցուցընելով

Եշրոոր լաւ ու բարոյազ էտ, Ճշմարիտ աղջա
սէր, աղջատ գաղափար ու անշահասէր ոզի ունեցու
և իւր աշակերտաց ամեն սովորեցընելու բանը ինք
աղէկ զիտցող և գործադրող դաստիարակներ
վարժապետներ ունենանք, այն ժամանակ

Երանի մեր զաւակաց և աշքը լոյս Հայ աղղին

ГИБДД

ԲԱՐԵՎԻ ՊԵՏՐՈՒԹԵԿՆ

七

Ասոնք շատ տեսակ են և իրարմէ քիչ տար
բերութիւն ունին, որոնց բնական ձրից վրայ չա

առաջին անշանդ ստութիւնը ; Գարնան կապտաց դյն երկնից մէջ, ամառուան առաջին մրբիալց ամպը :

Կանթեղները կը քերուին, իրենց սպիտակ ըյսը մինչև սենեկին ներսերը կը տարածուի : Պիշտիկ Մաքրուչին ալ այն տեղ եկած է ; իւր քրոջը Պաթինիկին, իւր եղքօրը Պատոյրին և իւր մօրը հետ : Սաթինիկն իւր քաղցրալուր ձայնովն ու մեծ սեաւ աչքերովը, Տիգրանին աչքին տիկնոջ մի պէս կերեւք . բայց Մաքրուչին, այն սիրուն Մաքրուչին իւր քոյր կը նկատէք, և զարմանալի՞ բան, աւելի շատ անդամ՝ իւր հայուածքը գէնկ 'ի անոր կը դարձընէք, քանթէ իւր քրոջը Տիգրանուչին :

Պարոյր ալ կը հասնի այս տեղ, իւր երեկոյ յիան պառոյտէն ետք, և կը ինպրէ որ իւր ընկերին հետ փաղին մը աղիսակի խաղ (քածա) խալոյ : Տիգրան՝ սեղանը այն կերպով կը շակէ որ Մաքրուչին միշտ իւր աշաց տեսութեան առջև ըլլայ, զրը շտեսներ միս մանը : Չտեսներ նաև թէ Տիգրան կը կարմիր՝ երբոր հայուածքը օրիորդին հայուածքին հանդիսի, և յետոյ յենարանին վրայ կը ծոփ, որպէս թէ բոլորովին իւր խաղին զաւդած է : Տիգրան ալ չնայիր որ երբեմն երբեմն ժողովում շարժումներ կը նէ ինքը, և երբեմն իւր սիրուն ու գեղանի դրացիկէն աչքերը կը դարձընէ և կըսէ Պարոյրին համարձակ կերպարանքով մի . “ Այէ կատուն ինչպէս հանդարտ է ” . որուն կը պատասխանէ Պարոյր թէ ինքը կը կարծէք որ ամեն կատու հանդարտ կը լլան իւրբոր 'ի քուն են :

Մաքրուչին ներկայութիւնը մոոցընել կուտայ Տիգրանին իւր անուշիկ Տիգրանուչի քոյրը : Զգիտեր անիկայ այն ժամանակ թէ ինչ սրտի բարութիւն մի և թէ ինչ սէք մի երեսի վրայ կը ձգէ, չդիտեր այն . բայց վերջը պիտի իմանայ թէ չկայ սէր թէ որ ի կարև ըլլայ հրշ մի սէրյու և բանդականաց ուլլը բունէլ :

Տիգրան՝ իւր խաղին ժամանակները, մատիոչ ունին կը գնէք, իւր մօրը Մաքրուչին մօրը հետըրած խսակցութեան : Այս խսակցութեան շնչատերը իւր ականջին ընտանեկան եղանակի մը պէս կը հնչէք, այնպիսի երածշուութեան մի պէս որուն գեղիեղը (mélodie) իւր սրտին մէջ երկար ժամանակ պիտի հնչէ, երկար ժամանակ, բայց իւր ձանուն հասակին մեծամեծ հոգերուն մէջ, առանց կոկիծի և հառաջանաց պիտի առաջանայ անոր վրայ մտածել :

Դ երջապէս երկու բարեկամաց խաղը կը լլը մընայ, ուրիշ խաղերու կըսկին, որոնց մէջ կը

մտնեն նաև Տիգրանուչին և Մաքրուչին, Գիշերը այս կերպով կը վերջանայ : Կանթեղներուն ըյսը կը տկարանայ : Արեւի այցելուները կը մեկնին, բարի գիշեր մաղթելով իրարու : Տիգրան սոյն այս սովորական մաղթանքը Մաքրուչին կուզդէ սիրաբորբոք կերպարանքով, և իւր մասնաւոյ գողումը անորմէ պահէլու ավատելով, — Հայրենի յարկին տակ օրուան այս վերջին յուզման մէջ ցաւ մաւ շմաներ բնաւ :

Բայց հիմայ, որդեհակի իմ, դրէ՛, համբուրէ քու մայրդ, համբուրէ զայն կրկին, համբուրէ քու պղտիկ քոյրդ Տիգրանուչին և քու ծերունի բարի հայրդ : Կրցածիդ չափ սիրէ և յարկէ զանոնք . ամեն գիշեր՝ քու մաքր բարեներդ և դիշեր բարիներդ մի մոռնար : Արեւ բոլոր հոգւովի քու հայրդ, մայրդ և քոյրդ : Օր մի, այս աշխարհային կենաց մէջ, պիտի ստիգմուս լսել անոնց վերջին մնաք բարեաւ մի :

(Պարանակիլլ) :

Եռ Գերապատիւ և դիտնական կ . վարդապետ Հանաղարեան,

Ի Փարիզ .

Փարիզ պատուական լրադրին մէջ հետզետէ շարունակաբար կը նթեռնունքը, Տէր Մապիլլոս կանոնիկուն ջապագովնել Դաշնայ լիդին, ձեր կողմանն եղած անաշու շնորհիւնը և հերան-լը :

Գարուն Հայաստանին իւր մասնաւոր շնորհ հակալութիւնը կը յայնու Ձեր Արբազնութեան, երախտագետ սրտիւ :

Յիրաւի մէծի զովեստից արժանի զործ մի է Ձեր Գերապատութեան այս ըրածը : Անով կաթողիկոսի մը պատճառած և պատճառելիք զայրակութիւնն ու ցաւը՝ Դուք կը բժշկեք . անով նոյն անվաներ ջապագովնելը, որ բոլորովի հակառակ է Հայաստանեաց ուղղափառ և սուրբ Եկեղեցւոյ վարդապետութեանց, կը հերքէ՛ ան հերքելիք փաստերու և իրաւացի ու շօշափելիք ասացոյներու զօրութեամբ :

Ձեր Գերապատութեան պէս աղջամէր գիտնական վարդապետներու կարօտէ մեր գրեթազդ Աղկը, որ փոխանակ յառաջադէ՛ր զարդանալու թշուառութեան մէջ կը նկղմի :

Պարան Հայաստանի .

Հեր . Այս , բարեկամութեանս վրայ կերդաւում , ըսէք միայն ինչ է ձեր զործը :

Սկս . Կուգէի իմանալ ձեղին թէ կարդուելու ըլլամ աղէկ կընեմ:

Հեր . Ո՞վ , գուք :

Սկս . Այս , ես իմ անձամբս : Ի՞նչ է ձեր խորհուրդը այս մասին :

Հեր . “Եախ և առաջ կաղաքնեմ ձեղ որ մէկ բան մը ըսէք ինձ :

Սկս . Ի՞նչ բան :

Հեր . Հիմա քանի՞ տարեկան կրնաք ըլլալ :

Սկս . Ե՞ս :

Հեր . Այս :

Սկս . Շշմարիս որ չեմ գիտեր , բայց անձամբ շատ եմ և առողջ :

Հեր . Ի՞նչ , տարիքդ չես գիտեր :

Սկս . Ո՞ւ , այդ ալ միտք պահելու բան է :

Հեր . Հը , ըսէք ինձ ուրեմն կաղաքնեմ , քանի տարուան էիք երբ ինձի հետ ծանօթութիւն ունեցաք :

Սկս . Իրաւ որ քսան տարուան էի :

Հեր . Քանի՞ տարի միասին Հոսմ կեցանք :

Սկս . Ութը տարի :

Հեր . Եօթը տարի :

Հեր . Եւ Հոլանտայի մէջ , ուր որ յետոյ դացիք :

Սկս . Հինդ ու կէս տարի :

Հեր . Քանի՞ տարի կայ որ հոս էք :

Սկս . Յիսուն և վեցին դարձայ :

Հեր . Յիսուն և վեցին մինչեւ վաթսունըութը , տասն և երկու տարի կընէ կարծեմ : Հինդ տարի Հոլանտա՝ տասն և եօթն , եօթը տարի Վնդղա՝ քսան և չորս , ութ ալ Հոսմ եղած ժամանակնիս երեսուն և երկու , և քսան տարեկան ալ կայիր նէ ծանօթութիւն ըրած տատենիս , կընէ Ճիշդ յիսուն և երկու տարի : Այսպէս , տէր Սկանարէլ , ձեր խոստվանութեամբը 52 - 53 տարուան մօտ էք :

Սկս . Ո՞վ . ես , այդ ըլլալիք բան չէ :

Հեր . Տէ՛ր Աստուած , ահա հաշիւը Ճիշդ է և այս բանիս վրայօք երբեք բարեկամ , համարձակ կըսեմ , ինչպէս որ դուք ալ խօսք առալ տուիք ինձ , թէ ամուսնութիւնը ձեր բանը չէ : Այսպէս բան մըն է ադ՝ որու վրայօք երիտասարդք անգամ պէտք են բաւական խմաստութեամբ խորհիւ կարգուելուն առաջ : Իսցց ձեր տարիքը եղող մարգիկը պէտք չեն ամենեին այդ բանին վրայ մտածել և եթէ ըսուիք թէ ամենէն մեծ խնդրութիւնը ա-

մուսնանալն է , այս խենգութիւնը ընելու ամենէն անյարմար ժամանակը կը զանեմ ես այն հասակը , որոյ մէջ կը պարաւորինք աւելի խոչեմ ըլլալ : Վերջապէս այս բանիս վրայ ունեցած կարծիք համարձակ կըսեմ : Զեղի խրատ չեմ տար երբէք որ միտքէ անցընէք ամուսնանալը և զձեղ ամենէն ծաղը լի մարդը պիտի սեպեմ , եթէ մինչեւ հիմն աղատ ըլլալնէդ վերջը՝ երթաք խիստ ծանր շղթայ մը վիզերնիդ անցընէք :

Սկս . Ես ալ , կըսեմ ձեզ , որ միտքս դըրած եմ ամուսնանալ և եթէ ուղած աղջիկս առնելու ըլլամ , ամենին ին ծաղը լի չեմ ըլլար :

Հեր . Ահ , ադ ուրիշ բան է , գուք ադ ըստած չէիք ինձ :

Սկս . Այնպէս աղջիկ մըն է որ սիրելի է ինձ և բոլոր սրաովս կը սիրեմ զինքը :

Հեր . Բոլոր սրտովնիդ կը սիրեմք զայն :

Սկս . Անտարակոյս , և իր հօրմն ինդրեցի :

Հեր . Խնդրեցիք զայն :

Սկս . Այս : Այս այնպէս ամուսնութիւն մըն է որ այս իրիկուն պիտի լինայ և խօսք ալ տուած եմ :

Հեր . Ահ , կարդուեցէք ուրեմն . ալ ըսելիք չունիմ :

Սկս . Միտքս գրածս ետ թողուլ : Կը կարծէք , տէր Հերոնիմոս , թէ ալ կարդուելու խօսք ընելը չվայլեր ինձ . իմ տարիքիս վրայ չեխոսինք ամենեին , բայց միայն զործքը նայինք :

Երեսուն աարուան մէկը ցուցուցէք որ ինձի չափ առոյդ և զօրաւոր ըլլայ : Մարմնոյս շարժումները տեղը չեն . նայեցէք ուրիշներու պէս կառքի կամ աթառի հարկաւորութիւն ունիմ ես՝ ճամբայ ընկըս ատեն : Ամեն ակատներս ալ լաւագոյն չեն մի (իւր ակատները կը ցուցընէ) . իմ օրուան չօրս անդամ կերակուրս չեմ կրնար մի ուտել , ցուցուցէք այնպիսի ստամոքս մի որ իմինէս աւելի զօրութիւն ունենայ , (կը հազայ) : Ճըմ , հըմ , հըմ , էհ , ինչ կըսէք ասոր :

Հ ա բ ո ւ ա բ ո ւ

Ա Յ Լ Ե Ւ Ա Յ Լ Ե

Պ Ա Տ Ա Ս Ա Խ Ա Խ Ի Ք

Հ Ա Բ Յ Ա Մ Ե Յ 157 Ե Բ Ե Ս Ի Ե

Բ . Կ ե ն ա ց ն ա տ ո ւ ա կ ը ո ւ է .

Բ . — Այս հարցման ինչուոյք կը պատաս-

իտանեն .

ՃՆՄԱՐԴԻՌԻ-ԻՌ ԳԼԵՎԵԼ . կամ ուրիշ բառեւ բոլ ,

ԳԵՂԵԳԻԻՆ , ՃՄԱՐԹԻՆ և բարւոյն սկզբանց ծանօթութիւնը և զործագրութիւնը՝ առաջին նը պատակ ընտրել կենաց .

Անդագար աւելի լաւ և աւելի հանձարեղ լինելու աշխատիլ .

Բարոյականութեամբ և իմացականութեամբ աղնուանալ :

Խակ Ապուածաբանք կը պատասխանեն .

Ապուած պէտը , ճանչելը և պաշտելը համար ավելի ած են :

Ապուած ամեն ՃՄԱՐԹՈՒԹԵԱՆ աղբիւրն կամ նոյն ինքն ՃՄԱՐԹՈՒԹիւն է :

Չնա սիրելը , Ճանչելը և պաշտելը՝ է սիրել , Ճանչել և զործագրել զՃՄԱՐԹՈՒԹիւն , որ մի միայն է զեղեցիկ , ՃՄԱՐԹիա և բարի :

Արդ թէ փիլիսոփայք և թէ Աստուածաբանք միաբան են կենաց մի և նոյն նպատակ նշանակելով :

Ամեն տեսակ վիճակի և պաշտօնի տէր մարդիկ , թէ հարուստ ըլլան թէ աղքատ , թէ զօրաւոր և թէ անջօր , թէ ուսեալ և թէ անուս , միշտ պարտաւոր են՝ իրենց կարողութեանց ներածին չափ , կենաց հասարակաց պարտաւորութիւնները կատարելէ ետք՝ իրենց բարյական . և մտաւորական կատարեալ լաւութեան աշխատիլ :

Զիայ անձ մի արդարե որ չկարենայ այս նը պատակը ընտրել և զայն ձեռք բերել՝ բարի և հաստատուն կամեցողութեան օգնականութեամբ , և ասոր հանրական և խիստ կարենոր ըլլալը փորձուած է :

Երկրորդական նպատակները՝ ինչպէս են հարըստութիւն , զօրաւորութիւն , հաճութիւն ևայլն . ընդհանուր չեն , որովհետեւ սակաւաթիւ անձերու բաժին են ասոնք

Կենաց երկրորդական նպատակները առաջին և գլխաւոր նպատակին պէս հաստատուն ալ չեն :

Անք արժանաւոր և բարի բաղձանքները՝ և ոչ մի մարդկային զօրութիւն կարող է մեր ձեռքին յափշտակել :

Գ. Պալթիկ ծովուն անունը ուսկից ծագած է .

Գ. — Պալթիկ ծովանունը՝ համեմատաբար բաւական նոր է : Հիները այս ծովը Ա-Ե-Վ-Ա-Ջ ծով կ'անուանէին , Բրուսիոյ մէջ՝ բնակող մեծ ժողովրդեան մի անունէն առնելով . անդացիք զայն Առունապար ծով կը կոչէին :

Մէջին դարու մէջ՝ Առեւաները Արեւելան

ծով անունը տուին անոր , և մինչեւ Հիմայ Գեր մանացիք և մօտակայ ժողովուրդներէն շատերը նոյն անունը կուտան այս ծովուն :

Պալթիկ անունը՝ Պալթիա կղղիին անսւնէն ծաղած է , զոր հիները այս ծովուն մէջ՝ կը դնէին : Կը կարծուի թէ այս կղղին կամ Փիսնիան է , և կամ Շուէտակի հարաւային կողմը , զոր Յոյներն և Հոովմայեցիք կղղի մը կը կարծէին : Այս ընդպահակ երկրիս (Շուէտա) վրայ՝ այն ժամանակ միայն սոյոյդ և իրաւացի զաղափար ունեցան , երբ ասոր մէջէն բաղմաթիւ պատերազմազ ժողովուրդներ ծաղացան , և Երուալայի մէջ սփռեցան , որոնք են Գոռթացիք , Աշանտաները , Հերիւները , Պուրկիներուները և ուրիշներ :

Գ. . Գ.

Յարդի Անթերցոզք :

Ուղղէտեւ Գարնան նախընթաց թուալ խօսք տուած էինք կ : Գ. ի Յօդուածին վրայ դիտողութիւն մի ընել , բայց Օ-աղիկ 24 դ թիւը կարդալնէս վերջը աւելորդ սեպեցինք զայն :

Ազատասէր և անաչառ Օ-աղիկ Հանդէսին միշոցաւ արգէն յայտնուեցաւ կատարելապէս ՃՄԱՐԹՈՒԹԵԱՆ և իրաւանց ո՞ր կողմ լինելը :

Միաւթիւնը և իւր համամիտը ասանց իրենց խօսքերուն և դիտողութեանց ո՞ւր երթալը դիմելու յայտնապէս ՃՄԱՐԹՈՒԹԵԱՆ և իրաւանց դէմ կուռելէ ետք , Հաստակութեան յարգութիւնը վայելող անձերը անիրաւաբար նախատեցին . . . իսայց նախատինք՝ առ նախառոշ դարձան , ինչը որ նախառոշն է մէջ նախառոշին և արհամարէիլ ն :

Աշուառէր և Աշուառէր Ճանցուած Հաշտենից ընկերութեան Հ-Ա-Ե-Վ-Ա-Ջ անդէմ անօրինակ յամառութեան կը ինկահաւատար մէտան արյաժանէն է լը

Տ. . Գ.

Շունը կը հաչէ , կարավանը կանցնի :

Ա Ռ Ե Խ Տ Բ Ա Կ Ա Ն

Զ Ի Ւ Ա Բ Ա Հ Ա :

Փետրուար 20 ին Ապրիլիա մեկնող Օրոնթէ անուն Գաղղ . շոգենաւուն մէջ բեռնաւորուած այլ այլ ապրանքները :

Ժէլինկառ Ե. Օիլմէր . 17 պալեայ բամ .

պակ. — Բ. Տանօն, 20 պ. նոյնէն. — Ա. Սալլահի 1. ծինէր և ընկ. 46 պ. նոյնէն. — Ա. Տիմիթ. բարօբուլո 30 պ. նոյնէն. — Քուզինէրի և որդի 30 պ. նոյնէն. 1 պ. տորոն և 2 պ. մետաքս. — Ե. Պօրն 1 պ. նոյնէն և 3 սնուուկ շերամի հունտ (պէօճէ թօչումը). — Յ. Ավաղեան. 4 սնուուկ նոյնէն. — Ա. Դարալամպախ 1 սնտ. նոյնէն. — Ա. Պօնալ 2 սնտ. նոյնէն:

Փետր. 24 ին թարիէսթէն եկող ԱՌԵՒՐ անուն Աւստ. շողենաւուն մէջէն ելած չուխայները և այլ և այլ անձանց ապրանքները:

1 սնուուկ և 1 պալեայ բամսակեղէն և 1 սնտ. մանր մունր ապրանք. Յ. Ավրիսուեանին. — 4 պ. շոխայ Ճ. Շէֆմէնին. — 3 պ. նոյնէն Աւետիքեան եղապր. — 1 պ. նոյնէն Ա. Դանձաեանին. — 2 պ. նոյնէն, Իւկ և ընկ. ին. — 5 սնտ. ֆէս. Տ. Լքիղլէրին. — 7 սնտ. նոյնէն, Խ. Լքիղեանին. — 2 սնտ. նոյնէն, ԱՌԵՀՄ էֆէն տիփն և այլն:

Փետր. 24 ին Ավրսիլիա մեկնող ՋՆՅ էմիլ անուն Գաղղ. նաւուն մէջ դրուած ապրանքները:

Դ. Պալմաղպեան 17 տոպրակ պիստակ (Փըստըք). — Ա. Քուլմասի 135 տոպ. սև շամիչ (Փըստըք). — Ա. Քուլմասի 135 տոպ. սև շամիչ (Փըստըք). — Ա. Պատիլաքաքի 2420 քիլէ ցորէն: — Փ. Պ. Խասավէրնէնս 222 տոպ. Շուշմայ (սուսամ) և Փետր 25 ին թարիէսթ մեկնող Բաժօֆէր էլեմ անուն Աւստ. նաւուն մէջի ապրանքները:

Խ. Լքիղեան 16 սնտ. մատուտակ (միան պալը). — Լ. Քարչէր և ընկ. 17 տոպ. եղիքւր. — Ա. Քիւրէջի օղլու 20 պ. տորոն (քէօք պօյա) և 522 հատ մարթ:

Փետր. 26 ին Ավրսիլիա մեկնող ՋՆՅ ընկերութեան Բրոնէս անուն Գաղղ. շողենաւուն մէջի այլ և այլ ապրանքները:

Տ. Ամիրա և ընկ. 123 պ. բամպակ. — Ա. Տիմիթը բարօբուլո 16 պ. նոյնէն. — Պ. Քասիմաթի 64 պ. նոյնէն. — Բ. Տանօն 10 պ. նոյնէն. — Տ. Ալաղըքի 20 պ. նոյնէն. — Ա. Մօրայիթինի 20 պ. նոյնէն. — Ա. Վէրդիէ 12 պ. նոյնէն. — Ծութիէ է Այսինէթի 240 տոպ. սև շամիչ. — Ավաղանի 1 օխնէր և ընկ. 100 տոպ. նոյնէն. — Բաճի Ե. Պարի 50 տակառ նոյնէն. — Յ. Վարչէտեան 200 տոպ. նոյնէն. — Ա. Քուլմասի 300 տոպ. նոյնէն. — Քրամիշը և ընկ. 9 սնտ. ափիոն էլար և 10 տակառ նոյնէն:

Փետր. 28 ին Պիդիլ Աշեյն անուն Անդզ. նաւուն մէջ գրուած ապրանքը 4100 կենդինար վարի կաղին (փալամուտ) է:

Փետր. 20 էն մինչեւ մարտ 3 այլ և այլ գրւ խաւոր ապրանաց ծախքերը և որդանութիւնը:

Վայրի կաղին (փալամուտ), 20000 կենդինար ծախտեցաւ 75—83 զուրուշ կենդինարը. ըստ տեսակին: Թարիէսթի համար 1000 կենց ինար բուհն ապրանք ծախտեցաւ. 91 ու կէս զըշ կենդինարը. Կոր ապրանքն 8—1000 կենդինար և հինէն միշտ 3000 կենդինար կայ:

Բամպակ. 100 պալեայի չափ ծախտեցաւ: Առավունչայինը 460—500, Քրքաղաքինը 430—490 Պասապայինը 420—470, Փայընտըքինը 390—420 Ատանայինը 460, Վոլոյինը 400 զըշ կենդինարը: Պատրաստ ապրանք իմաստքիչ կայ: Եւրոպայէն առնուած անհաճոյ. լուրերուն նայելով՝ առնողներուն այս ապրանքն ցրտանալ ու ետ քաշուիլ պատճառեց:

Տորոն (քէօք պօյա). 4500 պալեայ ծախտեցաւ, զին 223—225 զըշ կենդինարը ըստ տեսակին: Պատրաստ 5—60, 0 պալեայ կայ:

Ափիոն, ծախտեածը 50 կողով է: զինը 130 և 128. Այս ապրանքը նմանապէս միշտ խաղաղ և օր ըստ օքէ իջնալու վրայ է: Պատրաստ 1200 կողմիւ չափ կայ:

Բուրդ (եպիալը), ծախտեած չունի բնաւ: այս ապրանքն ալ հանդարտ է: Պատրաստ 200—250 կենդինարի չափ հազիւ կը գտնուի:

Ճէհրի, 50 տասքակ ծախտեցաւ. զին 12 զուրուշ 30 փարայ—15 զուրուշ 30 փարայ օխան: Այս ալ հանդարտ է: շուկային մէջ պատրաստ 820 տոպրակ կայ:

Գարի, 31000 քիլէ ծախտեցաւ. զին 10 ու կէս—11 տասը փարայ քիլէն. թէ հոս և թէ Գարչ տառան յանձնելու պայմանաւ:

Եղիպատացորեն. (մըսը պուղայը), 6000 քիլէ ծախտեցաւ. զին 15 տասը փարայ 16 զուրուշ քիլէն:

Շուշմայ (սուսամ), վերջին ծախքը 51 ու կէս զուրուշ է քիլէն:

Տ. Գ.

ՏԵՇԻՄ

Գ. ՊԱՏԻՄԱՆԵԱՆ

Տ. ՄԻՄԱՆ Ի Ը

Ի ՏՈՎՐԱՆ ՏԱՏԵԱՆ